

2632
2633
2634

Латинский
алфавитный

244
—
S-36

Брненгельс
1867

2010

* * 2001

СЕРЕБРЕНЫЙ
ЧРІСЦІЙСЬК

І ЧЕРІВЪ СТОГІЧІЧІ
ДЛЯ РІДКОСТЬІВЪ ЗІ
ФЕРУСОВЪ



І СЕРЕБРЕНЫЙ
ЧРІСЦІЙСЬКІ СТОГОЧІЧІ
ІІ. ЗАЧІЧАЛЬСЬ
ЗЪГЛЮСЛЪІІІ

1867

244
S - 36

๑๖๗๖

ԹԱՐՄԱ ՏԵՏՐԵԿ


ՀՊԱԿՈՒՄՆԵՑ

ՀՎԵՐՆԱՅԻ ՀԱՄՕՐՔՆ ՏԵՂՈՐԴԻԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՈՒԽՏԱՏԵՂԵԱՑ

ԱՐՔԵՆ ՅԱՍՏՈՒԱԺԱՇՐԱՎ ՔԱՂԱՔ

ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱԼԵՄ



Ի ԽՐԴՈՅ ՏԵՐՈՒՅԱՆ ԵՒ ԶԵՐՄԵՌԵԴ

ՈՒԽՏԱՏՈՐԱՑ



2012



Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՒԹՈՅ Ս. ՅԱԿՈՎԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

-1867-

Այժուցի լեզու իմ՝ ի քիմա իմ, թէ ոչ միշեցից ըղ-
քեզ, թէ ոչ նախ նուռագեցից զքեզ Ե՛րուսաղէմ, ը-
դիզբն ուրախութեան իմոց, Սաղմ. ձևա. 6:



~~Happy Anniversary 1875~~
Happy Birthday 6th October 1875
Sundarji aged 60 years 1875

بے قوانین تقدیر طقو حاجی کو کیا تھا۔
وردہ طاحی منتظر عزیز و امیر ۱۸۹۱

Happy Anniversary 1875
on my 1st. birthday
to all my dear friends
on 8th October 1875
1875

50737 - M. A.

ԵՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆ



ZUUN-Arm.CCP

36876 - 66

ՏԵՂ. ԳՐԱՇԱՀԱՅՑ
 Կ ՎԵՐԱՑ ՄՐՅԱՅՑ ՏՐԱՑ ԲԻՆ
 ԵՐԱԽՈՎԴԵՄ

Ե ՅԵՐԱՎՈՐԻՄ ՈՒԽԱՓԱՓԱՔ

ՀԱՅԱՏԱՑԵԼՈՅ

ՏԱՅՃՐՈ ՀԱԽՆԱԼԻԱՆ
ԱԼԵՅԱՆՎԵ

ԵՐԳ Ա.

228

Ա ԵՄԻ Ք Քաղաք ծովուն մօտիկ,

Երուսաղէմ խիստ գեղեցիկ,

Անմահութեան բուրէ հոտիկ.

Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:

Երուսաղէմ է ծաղկեալ դաշտ,

Յորում բնակին շատ խազապաշտ.

Տէր մեր Քրիստոս ընդ մեղ է հաշտ,

Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:

Երուսաղէմ է սուրբ քաղաք,

Յամեն օր գոյ անդ պատարագ,

Որոյ շընորհն է մրշտածագ.

Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:

Երուսաղէմ յոյժ փառաւոր,

Յուխտ Եկողաց գանձ հոդեւոր,

Մահաւութեան անուն տայ նոր,

Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:

Երուսաղեմ վեց դուռ ունի ,

Մըսանողաց մեծ շնորհ ունի ,

Զի քաղաք Տեառըն անուանի .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Սուրբ Փրկիչն է բանտ Քրիստոսի ,

Հրեշտակապետն ՚ի նոյն կարգի ,

Սուրբ Յակոբ է վանք պանծալի .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Յօրդանան գետ մըկրպութեան ,

Սուրբ Վերնատունն հաղորդութեան ,

Սուրբ Գողգոթայն խաչելութեան .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Սուրբ Յարութիւն է բարձրաշեն ,

Յօրինուածն է գեղեցկօրէն ,

Բազան գիմել աշխարհ ամեն .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Սուրբ Յակոբն է բարձր շինած ,

Աւագ խորանն ոսկեջրած ,

Պօղոս Գեւարոս վրան դրած .

Սուրբ Գլխադիրն յինքն է թաղած :

Գլխադրին դուռն յորժամ բանան ,

Անդ մերձակայք փրղձկին և լան ,

Հոգւով ցնծան ուրախանան .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Օռունը եղեալ դայն համբուրէն ,

Եւ խնդրուածք բազում առնեն ,

Յորդ արտասուօք զսդիս մաքրեն .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Սուրբ Յակոբն է զարմանալի ,

Արեգական նըման փայլի ,

Պարգևեւ տուեալ Հոցոց ազգի .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Սուրբ Յակոբն է բաղմասեղան ,

Վարդապետաց հանդիսարան ,

Քըսան և հինգ ունի խորան .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Սուրբ Վերնատունն երբ ոք հայի

Սուրբ Նշանէն անդ զարհուրի ,

Յանոց հոտոյն յոյժ բղմայլի .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Սուրբ Յակոբն է գանձ բարելի ,

Բոլորն ամէն Եկեղեցի ,

Ուխտաւորաց Ուխտատեղի .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Խմիածինն յետոց շնած ,

Սուրբ Սինա նոր խորան օծած

Ի վերայ սուրբ Երից վիմաց .

Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Կրոգ շնեալ կանանց տեղի ,

Ու վերնատուն անուամբ կոչի .

Երկու խորանք կան յայն վայրի ,

Ուր Պատարագ մատուցանի .

Յընթրեաց խորանն ՚ի հինգշաբթի
 Յաւագ աւուրս սուրբ շաբաթի ,
 Եւ ՚ի միւսում սուրբ խորանի
 ՚ի սուրբ տօնին Վարդավառի :
 ՚ի սէրքո սուրբ օրհնեալ Գրլիսին
 Երկու արքայք սիրով վառին ,
 Մէծըն Տըրդատ և Կոստանդին
 Սուրբ հաւատով առ քեզ եկին :
 Քրիստոս Աստուած Տէրն ամենին
 Ողորմելով դործոյս ձեռին ,
 Լըսել տացէ ինձ ծառային՝
 Ե՛կ օրհնեալ ձայնն Աստուածային :
 Որ մեղաւոր եմ հողածին ,
 Դու ես իմ յոյս , Աստուածածին ,
 Բարեխօսեա առ Միածին
 Յիսուս որդիդ յաւուր մեծին :

ԵՐԳ Բ.

Ասացեալ Բարառնաբար ՚ի վերայ գրիտործ Զարչա-
 լանաց պեղեացն Քրիստոսի :

՚ի սուրբ Երկիրն այն Աւետեաց
 Ճաման հասեալ Ուխտաւորաց ,
 Հարցաք լզնա ուրախազգեաց
 Ուր է քաղաքըն աննըման ,

Ուր է, ուր է յորում եր մեր

Արքայն օծեալ:

Զայներ ձայներ՝ զի՞ է զի՞ է.

Եկայք տեսեք դուք զայն օրհնեալք:

Պարեալ հոգւով անդ ցընծացաք,

Մարմնով զուարթուն ՚ի սեր անկաք,

Երբ ՚ի սուրբ լեառըն այն հասաք.

Ուր է տեղին բարձրացուցման,

Ուր է . ուր է յորս կայր մեր կեանք

Անդէն կախեալ:

Զայներ ձայներ՝ զի՞ է զի՞ է.

Եկայք տեսեք դուք զայն օրհնեալք:

Օրհնաբանեալ զմեր Արտիչ

Ըզպարգեւացըն ընձեռիչ,

Ելք հայեցաք զայն կառափիչ.

Ուր է սուրբ լեառըն Գողգոթայն,

Ուր է , ուր է յորում Յիսուս

Կայր տարածեալ:

Զայներ ձայներ՝ զի՞ է զի՞ է.

Եկայք տեսեք դուք զայն օրհնեալք:

Եկաբեկաւ սրբոի մեր նաւ

Յահէ փառաց նորին անբաւ,

Ուր խընդիր մեր յառաջ եղաւ .

Ուր է վէմըն այն պատառման .

Ուր է , ուր է յոր կայր անմեղ

Գառըն զենեալ:

Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք :

Արդւոց մարգիան սակըս մեղաց

Ի խաչ ել անդ Տէրլին փառաց ,

Զայն վայր հարցաք արիւնամած՝

Ուր է տեղին կողին խոցման ,

Ուր է , ուր է յորտւմ ջուր եւ

Արիւն բըղլսեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք :

Արտափելիդ ՚ի հրեշտակաց

Բարեբանեալ համայն յաղանց ,

Զքեղ աղաչեմք ովլ Տէր գրթած .

Ուր է լեզին այն դառնութեան .

Ուր է , ուր է զոր ընկալար

Դու ծարաւեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք :

Ա այ և եղուկ մերոց անձանց

Զի մատնեցաք ըզքեղ մեղաց ,

Արդ ոչ ցաւեալ կըրկին հարցաք ,

Ո՞ր այլ ցաւոցդ քո նըման ,

Ուր է , ուր է զոր կըրեցեր

Դու խոնարհեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք :

Երդարութեան է նա ազրիւր ,
 Դատապարաեալ կամաւըն իւր ,
 Չարչարանօք որ անդ տանջլւր ,
 Ուր է արիւնն սուրբ ոռոգման ,
 Ուր է , ուր է սուրբ Գլուխ փրշօք
 Իւր պսակեալ :

Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք :

Քամից ստեղծողն դու էից
 Հարեալ յեղեղըն յոյժ ձազից ,
 Ուրով հայցեմք ըզմուտ ելից ,
 Ուր է տեղին զքեզ կատակման ,
 Ուր է , ուր է յօրս գանեցար
 Անդ հայհոյեալ :

Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք :

Քատեալ որպէս նա պարտաւոր՝
 Բառնայր ՚ի յօւս զփայտ ահաւոր ,
 Ի բանտ մահու լեալ ուղեւոր .
 Ուր է տեղին տյն արդելման ,
 Ուր է , ուր է յօր զԱղամայն

Ըզլարաս քաւեալ :

Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք :

Անապական իւր սուրբ մարմնով
 Յոյժ վշշտապնիւր նա տագնապով ,

Կըրկին ըզմաշ բառնայր ուսով,
Ուր է տեղին այն գըլորման ,
Ուր է , ուր է յոր կայր Փըրկիչ
Անդ մերկացեալ :

Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք :

Պարտաւորեալ հանդէպ խաչի

Երես անկեալ կամք առաջի ,

Եւ հարցանեմք զրյադ կենդանի ,

Ուր է մուրհակ այն պատառման ,

Ուր է , ուր է զօր ջրնջեցեր

Արեամբ սրբքալ :

Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք :

Երբ հաւանեալ նա պատեցաւ ,

Ի Յովսեփայ փառօք բարձաւ ,

Գանձըն կենաց անդ զբմնեցաւ ,

Ուր է տեղին այն պատանման ,

Ուր է , ուր է յոր ըզծածկոյթ

Հնոյն էր զգեցեալ :

Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք :

Տարեալ եդաւ ՚ի գերեզման ,

Ի զինուորաց թողեալ պահպան ,

Ճածկեալ ՚ի սիրտ երկըի մըթան ,

Ուր է տեղին այն սուրբ Յաղման ,

Ուրէ, ուրէ յորում էր գանձն
Անմահացեալ:

Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է.

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք:

Հնն որ յարեաւ շքքեղ փառօք՝

Յարոց զընութիւնը իւր սարօք,

Կըցոց ըզմեղ իւր պարգեւօք,

Ուրէ տեղին սուրբ Յարութեան,

Ուրէ է, ուրէ յոր կայր հրեշտակ

Զինջ լուսափայլ:

Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է.

Եկայք տեսէք դուք զայն օրհնեալք:



ԵՐԳ. Գ.

Ի Քրայ սրբոյ Երուսաղեմ և այլ ան-ըն Տեղեաց:

Ի սէր հարեալ Աստուածակոխ

սուրբ Քաղաքին ցանկալի,

Յար և յաւէտ կարօտութեամբ

անձն իմ հիւծի միշտ հալի.

Նորին տեսոյն սիրտ իմ բաղմամբ

աչս արտասուօք լցեալ լի.

Դէս ՚ի յերկիրն սուրբ Աւետեաց

առնէր տանէր հովին զիս,

Դէպ ՚ի սուրբ վայրալն փրկարան
 փչէր տանէր հովի զիս՝ հովի զիս-
 Առին սիրոյն և տեսլենէն
 չկարացի ես յադիլ,
 Ի հեռանալու եւս առաւել
 ունիմ կարի բորբոքիլ,
 Յոր վայր նատիմ ուր և իցեմ
 չունիմ երթէք դադարիլ.
 Դէպ ՚ի քաղաքն Աստուածակոխ
 առնէր տանէր հովի զիս,
 Դէպ ՚ի սուրբ վայրալն փրկարան
 փչէր տանէր հովի զիս՝ հովի զիս-
 Օդաթոիչ թեւըս տայր ինձ
 ամենազօր Փրկիչն իմ,
 Ուր սլացեալ հասանէի
 ՚ի սուրբ Տեղիսն ըղձագին,
 Կրկին դիակեալ սուրբ վայելմանց
 լինէի ես խնդագին.
 Դէպ ՚ի յերկիրն սուրբ Աւետեաց
 առնէր տանէր հովի զիս,
 Դէպ ՚ի սուրբ վայրալն փրկարան
 փչէր տանէր հովի զիս՝ հովի զիս-
 Տապիմ տենչմամբ մեծ Տաճարին
 սուրբ Զարութեան մեր Փրկչին,
 Ուր կան տեղիք շնորհածիր,
 Գերեղման Տեառն ալարչին.

Ճամբերդողաց Երգ քաղցրտճայն

միշտ յունկո իմ առհնչին .

Դէպ 'ի տաճարն սուրբ Յարութեան

առնէր տանէր հովն զիս ,

Դէպ 'ի սուրբ վայրսըն փրկական

փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :

Առձկացեալ եմ այն որբադան

տեղւոյն որ կայ 'ի յԱյրին ,

Ուր Տէրն մեր ծնեալ եղաւ

'ի լուսափայլ սուրբ Մսրին .

Դապ հրեշտակաց անդ պար առեալ

օրհնաբանիչ միշտ լինին .

Դէպ 'ի սուրբ վանսաըն ծըննդեան

առնէր տանէր հովն զիս ,

Դէպ 'ի սուրբ վայրսըն փրկական

փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :

Ռոտեալ ըղձիւ միշտ փափաքիմ

ամենահրաշ Տաճարին ,

Ամենօրհնեալ մօր Տեառն իմոյ

գերամաքուր սուրբ Շիրմին .

Ուր Սերովլեէր և Գերովլեէր

անտեսաբար գումարին .

Դէպ 'ի Տապան սուրբ Տիրամօրն

առնէր տանէր հովն զիս ,

Դէպ 'ի սուրբ վայրսըն փրկական

փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :

Եւանդագին և կարօտիւ

սուրբ Յակոբեանց մեծ քահին,
Աւր կայ տապան Տեառըն Եղբօր
ներքց Աւագ սեղանին.

Այլ և որդւոյն Զերեգեայ

Գրիսադիրն այն ցանկալին.

Դէպ ՚ի յաթուն սուրբ Յակոբեանց
առներ տաներ Հովին զիս,

Դէպ ՚ի սուրբ Վայրորն փրկական

փչէր տաներ Հովին զիս՝ Հովին զիս :

Այրով մեծաւ Հեռուստ աստի

ծունը և Համբոյր արդ ձօնեմ,

Ըսորհաբաշխ քարանց Հովոյն

ըղդէմս իմ առփարեմ.

(Առ մեծ) Ճուղս կարօտակիր

Հէննես զերգս յարմարեմ,

Դէպ ՚ի քաղաքն Աստուածակոխ

առներ տաներ Հովին զիս,

Դէպ ՚ի սուրբ Վայրորն փրկական

փչէր տաներ Հովին զիս՝ Հովին զիս :



ԵՐԳ Դ.

Պահպատճենութեան ՚ի վէրայ որբոյ Երանակեմ:

ՅԱՍՈՒԾՈՅ շինեալ քաղաք պատուական,
Զանկալի զուարթեոց և որդւոց մարդկան.
Զքեզ նորոգեաց Դաւիթ մեծ արքայն.

Սմարք Երուսաղեմ քաղաք պատուական:
Կնմահ արքային դու Ես բնակարան,

Որդւոյն Աստուծոյ վայր տնօրէնութեան,
Ազինք ամենայն գալ առ քեզ ցանկան.

Սմարք Երուսաղեմ քաղաք աննըմման:

Կամարին երկնից Ես հանգունական,

Առ դիրս աստեղաց ՚ի հաստատութեան,
Ընդ կենդանակերպովն երկուասան,

Սմարք Երուսաղեմ քաղաք պատուական:

Որդւոյն Ցակորաց տուար սեփհական,

Վիճակաւ անկար տոհմին Յուղայեան.

Քեզ շինեաց տաճար Սողոմն արքայն,

Սմարք Երուսաղեմ քաղաք աննըմման:

Ռուբէ միշտ ՚իքէն հոտ անմահութեան

Վարդի շուշանի խրնկոց զանազան,

Կամ ազնիւ իւղոց նարդից բալասան,

Սմարք Երուսաղեմ քաղաք պատուական

Քաղաք Ես դու մեծ թափաւորական,

Իքեզ կառուցաւ նոր Սողոմնեան,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԱՍԻՐԱԾ

Աշխարհամասարան տաճապր Յարութեան։
 Մուրբ Երուսաղէմ քաղաք աննըման։
 Եզրիւր Մելովամ ջուր անմօհութեան։
 Բզիսեալ զովարար ծարաւ բընութեան։
 Դու մեղ նոր Ախոն քրիստոնէութեան։
 Մուրբ Երուսաղէմ քաղաք պատուական։
 Հաճեցաւ ՚ի.քեղ Տէրըն վերնական։
 Վէմ ընտիր եղեալ ՚ի գրուիր անկեան։
 Զի ինքնն Քրիստոս ՚ի.քեղ յարաժամ։
 Մուրբ Երուսաղէմ քաղաք աննըման։
 Կոտ եղեւ հոգւոյ փրկութիւն մարդկան։
 Որ ելիսկ ՚ի խաչ Տէր ՚ի Գողգոսթայն։
 Յանցանքն Աղամայ Եւայի կողան։
 Մուրբ Երուսաղէմ քաղաք պատուական։
 Նոր Երկինք յերկրի հրաշափառական։
 Դու նոր արեւելք նոր արեգական։
 Կորոգեալ ցնծան դանք քրիստուական։
 Մուրբ Երուսաղէմ քաղաք աննըման։
 Կու քեղ գանձ բազում հոգեւորական։
 Որով լիանան աշխարհ ամենայն։
 Կախ և առաջին Տեառըն դերեզման։
 Մուրբ Երուսաղէմ քաղաք պատուական։
 Ծոյժ ահեղագոչ իջմամբ մեծաճայն։
 Պար առնեն մուղայք միշտ համանգամայն։
 Մեղ քրիստոնէից լեր դու օդնուական։
 Մուրբ Երուսաղէմ քաղաք աննըման։

ԳԵՂԱԿԱՆԻ ՃՈՐՆ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ .
 Ուր ԱՍՏՈՒԱԾՈՒՅՆԻՆ ԴԻՐՆ Է Խ ՄԱՎԱՆ ։
 ԱՆԴ ԼԻՆԵԼՈց Է ՎԵՐՁԻՆ ԴԱՄՈԱՍՄԱՆ .
 ՄՌՈՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՔԱՂԱՔ ԱՊԱՏՈՒԱԿԱՆ :
 Ամենայն սրբոց ես լինդունարան ,
 Եւ մեղաւորաց մարդկան քաւարան .
 Ի ՔԻՆ մտանեն ՚ի յերկնից խորան ,
 ՄՌՈՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՔԱՂԱՔ աննըման :
 Ակրտ երկրի ես դու ՏԵԿԱՆ տիրական
 Հանգոյն Աթոռոյն քերովբէական .
 Ոտից Արարչին Եղեր պատուանդան ,
 ՄՌՈՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՔԱՂԱՔ ԱՊԱՏՈՒԱԿԱՆ :
 ԵՐԴ՝ չունիմ կարիք զոր քեզ է արժան
 Բարբառել բանիւք գովասանական .
 Կամ տաղիւ շափել երգ ներբողական .
 ՄՌՈՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՔԱՂԱՔ աննըման :
 Հնծութիւն ես դու աշխարհի համայն ,
 Առաւել Հայոց ազգիս Արամեան ,
 Ոքք սեռն սիրով դիմեն առ քեզ դան .
 ՄՌՈՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՔԱՂԱՔ ԱՊԱՏՈՒԱԿԱՆ :
 Երեք տաճար են ասու հիացական ,
 ՄԵԾԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ և սուրբ ծարննդեան ,
 Եւ սուրբն Յակոբ մատաւորական .
 ՄՌՈՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՔԱՂԱՔ աննըման :
 Երբային երկնից բարելի սեղսն ,
 Խունկ և Պատարագ ՚ի քեզ վերանան .

Ծնորհք սը Հոգւոյն քեւ առ մեղմիշտ գան
 Սուրբ Երուսաղէմ քաղաք պատուական :
 | լցեալ տօմարիս մեր յաբեթական՝
 Հաղաք և ութոտն թիւն էր ՚ի լըրման,
 Յակոբէս այս Երդ քեզ ընծայեցան .
 Սուրբ Երուսաղէմ քաղաք աննըմսն :
 | ին անեղին՝ սուրբ Երրորդութեան
 Փառք և գոհութիւն միշտ և յաւխուան
 Արա զմեղ արժան քոյին տեսութեան,
 Սուրբ Երուսաղէմ քաղաք պատուական :
 Դասք Երկնից զօրաց շուրջ զքեւ պարեն,
 Զիսացեալ Փրկիչն մեր օրհնաբանեն,
 Որ Եկն աղատեաց զմեղ գերողէն,
 Սուրբ Երուսաղէմ քաղաք աննըմսն :
 Ոչ գոյ նըման քեզ ՚ի մէջ աշխարհի,
 Որ յար նըման ես վերին Սիտնի .
 Արժան արա Տէր տեսլեամբ սուրբ Երկրի
 Զազգըս մեր համայն սիրով ըղձալի :







Յարկու Աստուած էւ գրուեցան տմկնայն
թշնամիք նորս :

ԵՐԳ Ե.

Ի վերայ սրբոյ Գերեզմանին Քրիստոսի :

Խմաց Փրոկչին առ ըս Գեղիւղման ,
Աննիրհ Տեառըն դու քընազան .
Զուայթուննե ձայներ ու բավական
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց :

Ա,Պ վիմափոր դիր հրաշական
Վոտուածային մարմնոցն նընջման .
Զինուորքն եզեն զարհուրական .
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց :

Օթեալ ՚ի քեզ լսոն էական
Յերիս շրջոն աղեկական .
Ելմամբն ՚ի քէն կնիք քո չեղծան .
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց :

Տարեալ ՚ի քեզ զմեմն երկրաշիք
Ճագեաց ՚ի ափիւռս լսո երինածիք ,
Կուամողութեանց աայ ցան և ցիւ .
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց :

Երիւծն Յուգա այն Յակոբեան
Յառնե ՚ի քէն ՚ի քնոց նընջման ,
Կապտէ զկապուռն յազթողական .
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց :

Ի ամք Խւղաքեր կանանց Եկին .
Զվեմն ՚ի դրանց բարձեալ տեսին ,

Զուարթնոյն լուեալ տարածեցին .
 Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց :
 Են յարեալ նախ Մօրն երեւեալ ,
 Մադղաղենւոյն յեաց յայսնեալ ,
 Մետաստանից ասլա դիմեալ .
 Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց :
 Աերովքէն կոյր առ դրան քոյին ,
 Լուսափայլ էր նիստ ՚ի վիմին .
 Զայնիւ մեծաւ գոշէր ուժդին՝
 Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց :

ԵՐԳ Զ.

Դուշաւանութիւն ՚ի վերայ սըբոյ Գեղեղմանին
 Քրիստոսի :

Առք Գերեզման յոյժ գովելի ,
 Համայն աղանց ես ցանկալի .
 Առ քեզ դիմեմք աղերտալի ,
 Ա՛զ հրաշալի սուրբ Գերեզման :
 Եթոս եղեր դու Արարչին ,
 Հանգըստարան անմահ Փրոկշին .
 Զարշարելոյն ՚ի փայտ խաչին ,
 Լուսածաւալ սուրբ Գերեզման :
 Եյն որ ՚ի նմին ահեղ գոշեաց ,
 Երեքօրեաց ՚ի քեզ նընջեաց ,

Ի՞քն զարթեաւ և զմեղ վլրկեաց,
 Ա՛վ հրաշալի սուրբ Գերեզման։
 Դու ես պարծանկք Քրիստոնէից,
 Յոյս յարութեան մեղ համայնից。
 Ըղքեղ Աստուած փառօք ելից,
 Լուսածաւալ սուրբ Գերեզման։
 Ե Սերովեէից օրհնաբանիս,
 Ե քրիստոնէից երկրապագիս。
 Քան զարեգակն պայծառ փայլիս,
 Ա՛վ հրաշալի սուրբ Գերեզման։
 Լուսածաւալ սուրբ Գերեզման,
 Աստուածորդւոյն տեղի թաղման,
 Անմահութեան հոտոյն բուրման,
 Լուսածաւալ սուրբ Գերեզման։
 Սուրբ և մաքուր Գերեզման կոյս,
 Քրիստոնէից պարծանկք և յոյս。
 Ե քէն բըղիսի միշտ պայծառ լոյս,
 Ա՛վ հրաշալի սուրբ Գերեզման։
 Յոյժ փափագիմք օրհնեալ տեսոյդ,
 Եւ կարօտիմք քաղցրիկ գեղոյդ.
 Երկրապագեմք քարիդ՝ հողոյդ,
 Լուսածաւալ սուրբ Գերեզման։
 Արժանացն քում տեսութեան,
 Եւ բաց մեղ դուռն զողորմութեան։
 Քանզի գին եմք անգին արեան,
 Ա՛վ հրաշալի սուրբ Գերեզման,

Գերեզման ես լուսափայլեալ,
 Աքանչելափառ տաճար կաղմեալ.
 Տեառն Աստուծոյ տռոն անուանեալ
 Լուսածաւալ սուրբ Գերեզման։
 Սարսափելի ես հրեշտակաց,
 Եւ սոսկալի հողեղինաց։
 Դու յարկ Եղեր Բանին կենաց,
 Ավ հրաշալի առրբ Գերեզման։
 Աքիմ անաց հոս ծաւալի՝
 Ըստեամբ քո համբուրալի։
 Զքեզ տեսողաց բիւր երանի,
 Լուսածաւալ սուրբ Գերեզման։
 Օգերեզմանեղ Իպիրեալ բանան,
 Եւ ցընծութեամբ անոր ընթանան։
 Զլսս քո տեսեալ ուրախանան,
 Ավ հրաշալի առրբ Գերեզման։
 Առ թագեալըն ՚ի քեզ մազթեմք,
 Արժանանալ աեսոցդ խընդրեմք։
 Նըմա և քեզ Եքելքապագեմք,
 Լուսածաւալ առրբ Գերեզման։

ԵՐԳ Ե.

Դարձեալ ՚ի նոյն՝ աղջկախառն։

Ըստ քեզ Եկից սըստափափագ։
 Զքեզ համբուրել տենչիւ անյագ։
 Զիս ՚ի մեղաց փրրկեան արագ,
 Մեղաց փրրկող սուրբ Գերեզման։
 Ի մէջ մեղաց անկետ գերի,
 Յամէն կողմանց գըտեալ թերի.
 Ողորմեան ինձ մեղաւորի,
 Մեղաց փրրկող սուրբ Գերեզման։
 Ի դուռնորդ գամ թէպէտ լալով,
 Բայց փառս տամ աղօթելով,
 Լուսոյդ հոսովն ըզմացիւով,
 Մեղաց փրրկող սուրբ Գերեզման։
 Հաղումք ընդ իս ընթացակից,
 Ես ՚ի սէր քո յոտորդ Եկից.
 Սըրբիկ հոգւով Երկրապագից,
 Մեղաց փրրկող սուրբ Գերեզման։
 Կամաւ ՚ի խաչ բեւեռելցն,
 Արիւնաների խոցեցելցն,
 Փառօք ՚ի քեզ թաղեցելցն,
 Մեղաց փրրկող սուրբ Գերեզման։
 Օտշաարհ ամէն զուարթերես
 Ակրով կապեալ յոտորդ բերես,

Եւ համայնից նոցա ներես,
 Մեղաց փրբկող սուրբ Գերեզման։
 Անմահ Փըրկչին դու աննըման,
 Եղեր տեղի Մարմնոյն թաղման։
 Եւ ՚ի հօրէ լուսոյն ծագման
 Անուանեցար լոյս Գերեզման։

ԵՐԳ Է.

ԱՏՎԵՐՁ

Անդամաց առ Աշխարհամարտան պաճառն ո՞յ
 ՚ի սուրբ Յարութեան։

Արփիահրաշ դու հարսնարան
 Կենաքարին,
 Երկենք յերկրի լուսափայլեալ
 գերքան զարսիին.
 Մահու մարմնով նընջողն ՚ի ծոց
 ՚ի քո շիրմին
 Յարեաւ փառօք, ձայնէր զուարթունն՝
 ահա տեղին։

Այս տաճարաց սուրբ Յարութիւն
 մեր հոգեծին,
 Անմահութեան ՚ի քէն պարգեւք
 մեղ ծագեցին.
 Առ ընդհանուր Եկեղեցիս
 ծագաց Երկրին

Բղլսեցին գետք յորդախաղաց
ջուր կենդանին :

Քեզ յամենայն լեզուաց աղգաց
անլըռելին
Միշտ օրհնաբան հոգենուագ
ձայնք աստ հնչին .

Քեւ արդ փառօք ցընծայ յաւետ
աղգ չայկաղին ,
Ենոր սեղան զենմամբ անմահ
սրբոյ Գառին :

Արդ խոնարհեալ սրբոյ Տեղւոց
շնորհաց քոյին :

Փառս վեր երդեմք յարուցելոյ
քեզ անմահին .

Երկրպագուացս՝ ուր կամք սրբոյ
Գերեզմանին ,

Տացես դասիլ անմահական
քում վիճակին :

Յողոք անկեալ մաղթեմք ըզլայսդ
իմանալին ,

Յերկնախումբ պար խառնեալ զմեղ
տաճար վերին .

Շամեալքս աստէն ՚ի մլութիւն
սրահի քոյին ,

Գեղանըշոյլ ըղմայլեսցուք
յիտկականին :

ԵՐԳ Թ.

Ը- սո-րբ Բանակն :

Քեզ Հօր լուսոյ Երկնաւորի

Հոգւով բեկման :

Երկրագագեմք ՚ի Տաճարիո

այս սրբութեան :

Ուր միածին Արդիդ Եկեալ

լոյսն անսահման :

Վառեաց ըզաէր ընդ Աստուծոյ

և ընդ մարդկան :

Ըշարհագոյժ այս վայր Փրկչին

սրբասահման :

Եղեւ չորրորդ տեղի մըթին

բանաւ արգելման :

Ուր դա վերջին հասեալ վըշտաց

անարգական :

Յաղելու առ քեզ ձեռք մեր յերկինաւ

ասու ամբառնան :

Հան ՚ի բանաէս, լոց ՚ի կապէս

գամենեսեան :

Ուզուա գընալ ըզհետ Որդւոյդ

միշտ անխափան :

Հանգու զհոգիս նախնեաց մըրոյ

յերկնից խորան :

Պարետ ցընծալ ընդ հրեշտակաց

՚ի յաւիտեան :

Ե Բ Գ Վ Ժ Հ

Ի ուշըն՝ ուր զւանդերն ըստանեցին ։
 Փըրկիչ մեր և Տէր յաղթողըն մահու
 տաւիցն կենաց ։
 Գայ ՚ի մահ խաջը ։ Առայ զարիւն իւր սուրբ
 ՚ի դիմ վրքիանաց ։
 Այնու որ արկաններ սրակեա լորհանդերձ
 զարյա աննմառ վառաց ։
 Վիճակ արկաննեն հանդերձի նորա
 դասքըն զինուորաց ։
 Արում վրկայի մեղ տեղիւս այս սուրբ
 պաշտեալ հրեշտակաց ։
 Ընդունելով միշտ երկրապատճիւն ։
 յիւրաց սիրողաց ։
 Աւր այժմ ՚ի թափօր պար առեւոլ շրջիմք
 ձայնիւս երգասաց ։
 Եւ աղաղակեմք լուր Փըրկիչ բարի
 մեր պաղատանաց ։
 Մերկեա ՚ի մէնջ Տէր մերկութեամք քոյին
 զգործ խաւարամած ։
 Եւ ըզգեցն մեղ զէն արդարաւթեան
 զըրահ անթափանց ։
 Փոխան հանդերձիդ որ անհերձ մընաց
 վիճակ զինուորաց ։
 Վիճակեա ըզմեղ ՚ի քո միութիւն
 յերկրին կենդանեաց ։

ԵՐԳ ԺԱ.

Ի Քէրայ որբոյ Խաչին :

ՈՒիշտ որ ընդ Հօր՝ է նս պարզ մի,

Որ ընդ աջմե նորին բազմի .

Այսօր ում խաչ աթոռ կազմի ,
Հանդչարան մի ոչ գլուհնի :

Կարսկցեալ ընդ մարմնոյ բաւի ,

Որ բարձողն է մերոյս ցաւի .

Խոկ այժմ ՚ի խաչըն ծարաւի ,

Արբուցիչ մի ոչ գտանի :

Վլքիւր կենաց յորմէ հեղի

Անդուլ ՚ի գասս մարդկան ցեղի ,

Եւ ինքն ՚ի մէջ նեղաց նեղի ,

Հանդուցիչ մի ոչ գլուհնի :

Կարդայ առ Հայր իւր սիրելի ,

Զայն ածելով ելի ելի .

Եղեւ մեռեալ և պատելի ,

Ում պատող մի ոչ գլուհնի :

ԵՐԳ ԺԲ .

Ի պէշոջ գիւղի որբոյ Խաչին :

ԱՆծափափար էին բաղձանք

Աստուածասէր սուրբ Դշլսոյին ,

Մէծ թագուհւոյն սուրբ Հեղինեայ

Այւ գիւտ անգիւտ սրբոյ Խաչին :

Որ ըղծածկեալն հարուստ ամօք
Ընդ բազմակոյտ խերեւեշին ,
Ուկի արծաթ և մարգարիտ
Սրբուեալ խնդրէր բզբաղծալին :

Եւ մեք նորին շաւղաց կըցորդ
Եկեալ հասաք ՚ի նոյն տեղին ,
Յածեալ ընդ ծով և ընդ ցամաք
Ի հեռաւոր ծագաց երկրին :
Փոխան ուկւոյ և արծաթոյ
Եւ բազմաթիւ այն մարգարտին ,
Զհաւատ՝ ըզյոց՝ ըզեր անկեղծ
Մատուցանեմք կենարարին :

Օքեղ աղաչեմք՝ պահեա Փըդիչ
Ընդ հովանեաւ քո սուրբ Խոսչին ,
Ըզքերմեռանդ զերկրպագուս
Եւ զաղգս ողջոյն ուր և բնակին :
Փըդիեա զնոսա չար յարկածից ,
Տուր քաւութիւն մեղաց նոցին ,
Աւրախացո տեսութեամբ քով
Ի յերեւիլ սուրբ Նըշանին :

ԵՐԳ ԺԳ .

Եւ Փուշ Պատին :

Եթու շնորհաց Աստուածաբարձ
Քաւակերպեան իառաց քատակ ,

Ծագաւորին քո պատմուման
 Ո՛չ բեհեղեայ գերփառունակ :
 Այլ հընոտի քղամիդ կարմիր
 Ըղգեցուցին առնել ծանակ .
 Եւ բարձողին ըղփուշ մեղաց
 Եղին ՚ի գլուխ վրշեայ պլասկ :
 Տուեալ զեղէդն յաջոյ ձեռին
 Փոխան ոսկւոյ գաւաղանին .
 Ի ծունը իջեալ բարբառեին՝
 Ո՞վ լեր Արքայ Հրէից աղգին :
 Օածկեալ զերեսարն տանջէին ,
 Զգլուխն եղեգամբ հարկանէին .
 Եւ հանէին նըմա ապտակ ,
 Եւ ոլ եհար՝ հարցանէին :
 Ո՞ւ էր պատկան վրշեայ պլասկ
 Եւ գան մահու դառնագունին ,
 Զոր ընկալար Աստուած հրզօր՝
 Առ ՚ի վրբկել զազդ մարդկային :
 Աստուածաղարդ դու պսակեա
 Ըղմեր գրլուխ շնորհօք քոյին .
 Մեր երեսաց ամօթ յետին ,
 Եւ քոյին վառք միշտ բարձրացին :

ԵՐԳ ԺԴ.

Դաշտասահն ՚ի վերայ սուրբ Գողդոթուային :

Սուրբ Գողդոթայն բարձր է շնուալ,
Պայծառափայլ է յօրինեալ,
Արիւնաներկ խաչ է կանգնեալ.
Եկայք ելցուք ՚ի Գողդոթա :

Սուրբ Գողդոթայն շնորհազեղ,
Բոլորովն է Ռւխտատեղ,
Հող և քարինքն են մեղաց գեղ.
Եկայք ելցուք ՚ի Գողդոթա :

Սուրբ Գողդոթայն մինչ շնեցին,
Կաթամք ըզկիր շաղախեցին,
Զի ըզտէր մեր անդ խաչեցին.
Եկայք ելցուք ՚ի Գողդոթա :

Սուրբ Գողդոթայն է գեղեցիկ,
Ի շրջապատն Եկեղեցիք,
Սուրբ ըզխացքն անդ սլաշտեցիք.
Եկայք ելցուք ՚ի Գողդոթա :

Սուրբ Գողդոթայն տեղ է լալս,
Եւ ըզմեղը մեր քաւելս,
Ըզդուռն երկնից առ բաղխելս.
Եկայք ելցուք ՚ի Գողդոթա :

Սուրբ Գողդոթայն սարսափելի,
Յոր աղօթելն ընդունելի,

Դիւրին լինի անդ լսելի .
 Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :
 Առւրբ Գողգոթայն ակնեղէն թագ ,
 Տեսանողաց կըքինի փափաք ,
 Ազօթս առնել անդէն անյագ .
 Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :
 Առւրբ Գողգոթայն է սուրբ վայր մի ,
 Համբուրողաց Տէրն ողորմի ,
 Առ գտանել մեղաց ճար մի .
 Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :
 Առւրբ Գողգոթայն է բարետուր ,
 Զհայողն ՚ի վեր կալնու զարհուր ,
 Միշտ հոտ անոյշ տայ քաղցրաբոյր ,
 Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :
 Առւրբ Գողգոթայն գերամբարձեալ ,
 Յոր խաչեցաւ Փրսկին օծեալ ,
 Ար զՅովհաննես փոխանակեալ ,
 Արդի ետ մօրն ամենօրհնեալ :
 Ի Գողգոթա տարածեցին ,
 Ըզձեռս և զտուրն ծակեցին ,
 Զմայրիկն ՚ի դէմըն լացուցին ,
 Զի սուրբ ըզսիրաբն խոցեցին :
 Քրիստոս Աստուած մեր խաչեցաւ ,
 Ի Գողգոթա բեւեռեցաւ ,
 Ցերեկն ՚ի խոր գիշեր դարձաւ ,
 Զի արեգակն խաւարեցաւ :

Յայնժամ սուրբ կոյսն Աստուածածին
Կայր առ խաչի պատուանդանին ,
Փետէր թափէր զմաղն ՚ի գետին .
Չի Միածինն էր ՚ի խաչին :

Ե Ւ Գ ԺԵ .

Դաշնաւաւ սուրբ Գուշին :

Դու Փըրկիչ և յոյս մեր
Ընդ այսքան խոնարհիս ,
Ի գագաթ այս լեռին
մահագոյժ տարածիս .

Ուր քո դեմք լուսավայլ
երկնաւոր Արքայիս ,
Երկրաքարչ խոնարհեալ
ծովարեան ծածանիս :

Տագնապաւ դոլացան
ընդ տեսիլ ահագին ,
Վերնային լուսաւորք
և երկիր ընդ նոսին .

Ուր վասն իմ քառաթեւ
տարածեալ ՚ի խաչին ,
Բարձրացար ՚ի տեղւոջ
ետուր զքեզ առ իմ գին :



Տէր ՚ի քո յայս բեմէս
դարձ հայել սիրաբուն .

Առ վրկեալքս քո արեամբ
 առ նր Ուխտս այս ողջոյն .
 Յօղեսցին ցօղք շնորհաց
 'ի վերայ քոց ՚ի նոյն ,
 Տացին մեղ կեանկը անմահ
 յայս անպարտ քում մահուն :

ԵՐԳ ԺԶ.

Ե՞՞ սուրբ Պատուագեղին :

Յարեմաթեայ Յովսէփ արդար
 ՚ի սուրբ Խաչէն առ զՏէրն ՚ի վայր ,
 Երեքսըրբեան երգ Խաչեցար
 Երգաբանէր մաղթողաբար :
 Հրաբորքոք Խոցք բեւեռաց
 Հատանէին դշանեթ կայծականց ,
 Ուրով բաղմէր նորին բաղկաց
 Վարդակարմիր արեամբ ներկած :
 Կիկոդեմոս անդ հանդերձէր
 Ըղմուռա՛ հալուէս՝ իւղըս ՚ի նուէր ,
 Դա որ մահու և կենաց տէր
 Աստ ՚ի պատանլս օճանէր :
 Պատարագէր յայս տեսարան
 Երանուհին մայր Մարիամ ,
 Տարտամ մտօք յՈւժաթափման
 Եր իւր Որդւցն ՚ի յանդիման :





ԳԼԽԱԴԻՐ ՍԱԽԲ ՅԱԿՈՎ

Ե Ր Գ Ճ Է .

Ի Վ Ե Ր Ա Մ Բ Ի Շ Յ Ա Ջ Ե Մ Ե Ա Ն Հ Պ Ա Ճ Ա Ր Ի Ն :

Համայն աղանց ես գովելի
սպայծառ Տաճար դեղեցիկ ,
Հիմնեալ յանուն Առաքելոց
սուրբ Յակովեանց երջանիկ .
Ըլքեղապանձ ձեւով կանգնեալ ,
շափիւղայ են քոյդ քարինք .
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի :
Են ՚ի վերայ չորս սեանց ձըգեալ
ձեղունք ահեղ բարձրագոյն ,
Առ որս արկեալ թեւատարած
ամուր կամարք լայնագոյն .
Յորոյ վերայ կայ հոյակապ
գմբէթ քոյին մեծագոյն ,
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի :
Երբոյ Աւագ սուրբ խորանիս
կայ անգին գանձ պատուական ,
Տեառն եղօր սուրբ Յակովեայ
մարմին եղեալ ՚ի դամբան .
Որոյ սուրբ գահն ՚ի քեղ փայլի
ըստ արեւու հրաշական .

Պարծանք մերոյ Հայոց աղգի ,
 ով սուրբ Տաճար ցանկալի :
 Եւ և որդւոյն Զեբեղեայ
 առաքելոյն Յակովայ ,
 Սուրբ Գրլիսոյն դիրքն գրմբէթայարկ
 սեղան վերայ կաղմեալ կոյ .
 Որով Երկու լուսաւորօք
 Նըման Երկնից դու ցընծա՛ ,
 Պարծանք մերոյ Հայոց աղգի ,
 ով սուրբ Տաճար ցանկալի :
 Եւ տապան սուրբ Մակարաց
 որ Գրլիսադրին մերձ վայլի ,
 Մատուռն չըքնաղ կից առ նմին
 սուրբ Մինասայ սուրբ Արքսի .
 Տաճարք սրայծառ Առաքելոց
 Են վերամբարձ և սուրբ Խաչի ,
 Պարծանք մերոյ Հայոց աղգի ,
 ով սուրբ Տաճար ցանկալի :
 Ստեփաննոս , Էջմիածին
 տաճարք շըքեղ հրաշաղան ,
 Որը ընդ թեւօք յաջ և յահեակ
 պարայածեալ շողզողան .
 Վերնայարմիդ . Պետրոս Պօղոս
 առաքելոց կան սեղան .
 Պարծանք մերոյ Հայոց աղգի ,
 ով սուրբ Տաճար ցանկալի :

Կայ ՚ի ծոցի մենաստանիդ
 սուրբ Ծորոսի մեծ տաճար ,
 Հոգւոյն սրբոյ զատ այլ մատուռն
 ձգեալ բարձանց գեղապար .
 Քսան և եօթն ՚ի միջի քում
 խորանք պաշտին գերափառ ,
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ով սուրբ Տաճար ցանկալի :

Յառելեալ յեպոյ :

Եսոցին փառս յաւել ՚ի քեզ
 դար որ առ մեզ ոսկեղէն ,
 Հիմնադրութիւն քո վերնասան
 դաւթեան վերայ մեծաշէն .
 Լուսամըսօք անդ եօթներումբ
 ճաճանչ պայծառ շողողէն .
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ով սուրբ Տաճար ցանկալի :

Երդ մաղթանաց եօթնափառեան
 օրհներգութեանց աստ մատքին ,
 Ընդ անարիւն ձօն հաշտարար
 անմահ զենման սուրբ դառին .
 Պայծառազգեացք և ծաղկասիիւռ
 թափօք ՚ի պար բողըին ,
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ով սուրբ Տաճար ցանկալի :

Ե Ր Գ Ճ Ը

Դարձեալ պատմաբանօրէն ՚ի վերայ Գւշտուն
ունոյն Յակովայ :

Քըրիստոսի սուրբ Գերեզման
Միշտ կանթեղք քո են ՚ի վառման ,
Որբ ուխտ դնեն և առ քեզ գան ,
Ամենեցուն լեր օգնական :

Սուրբ ըղթակոր գրլիսատեցին ,
Կախ ՚ի Սաղիմ ամիսովեցին ,
Եկեղեցի Հիմնարկեցին ,
Սուրբ Գրլիսադիր անուանեցին :

Եղա հրեշտակք անտի առին
Զ'առանց գրլիսոյ նորին մարմին ,
Հըրամանաւն Աստուածային
Ի Սպանիա քաղաք տարին :

Եւ քաղաքն այն էր մերձ գետոյն ,
Զմարմինն եղին յեղքը ջրոյն ,
Ի յաղդմանէ Աստուած հոգւոյն
Ընդ այդն եղեւ գալ ժողովոյն :

Կաղքըն և կոյրք միահաղոյն
Եկին լուանիլ ՚ի մէջ գետոյն ,
Անդ պատահեալ նոյն սուրբ մարմնոյ
Բըժը կեցան յամէն ցաւոյն :

Ուրախութեամբ գարձեալ ՚ի տուն
Մեծ աւետիս մարդկան ետուն ,

Յոր թէ ռամիկ թէ խմաստուն
 Զարմանալեօք լրցան համբուն :
 Խորհրդակցեալ ընդ արքային
 Ի գետըն յայն ջոկ ջոկ գային ,
 Տեսեալ ըզնա արտաստուեին ,
 Անդլուխ Աստուած անուանէին :
 Բերեալ բեհեղ զայն պատեցին
 Եւ ՚ի քաղաք անդ հանգուցին ,
 Պատուեցին յոյժ և պաշտեցին
 Իբրեւ զԱստուած մեծացուցին :
 Մինչեւ սուրբըն Պօղոս գլնաց
 Քարոզել անդ ըդբանն կենաց ,
 Սպանիացւոց միտարն երաց ,
 Դա մեր եղբայրն է մինչ ասաց :
 Մոլորութիւնք նոցին բարձան ,
 Ի պաշտմանէ կրոսյ դարձան ,
 Եւ Քրիստոսի հետեւեցան ,
 Արքայութեան արժանացան :

Ե Ր Գ Ժ Թ .

Դարձեալ պատմաբար ՚ի վերայ սրբոյն Յակովոյ :
 Առաքեալն սուրբ Յակովը
 Որդին որոտման ,
 Զոր կալեալ չարչարէր
 Հերովդէս արքայն .

Եղեւ նա գլխատեալ
 յաղդէն տիրասպան ,
 Զի ըզբաժակըն ըմպել
 Տեառն էր հրաման :
 Ո՞ղ սուրբ Կոյսն տիրամօր
 առաքեալն Յովհան
 Մինչ կային վարանմամբ
 գՅակովային կալման .
 Հըսեցտակըն բերեալ
 դդլուխն սպատուական ,
 ԵԴ նոցա առաջի
 կոծով թախծութեան :
 Օ՞ր առեալ հանգուցին
 դդլուխն սրբազն ,
 Ի տեղւոջ պատշաճեալ .
 դԺեառնէ դոհացան :
 Աւր վանք մեծ շինեցաւ
 թագաւորական ,
 Ի ձեռըն Կոստանդիու
 և մեր Տրդատայն :
 Ո՞ղ սուրբ Լուսաւորչին
 աղդիս Հայկաղնեան .
 Էր սուրբն Սեղբեստրոս
 սպազըն Հոռվիմայն .
 Շինեցին յոյժ սիրով
 զտեղիս սրբութեան .

Ըզտաճար Յարութեան
 և ղայլս ամենայն :
 Հաստատեալ մայր Աթոռ
 առաքելական ,
 Զտաճարն սուրբ Յակով
 Պատրիարքական ,
 Որ է վայր ցանկալի
 ազանց ամենայն ,
 Եւ ազգիս Արամեան
 պարգեւ սեփական :
 Արդ է մեծ և պայծառ
 վանք Երկնանըման .
 Գլուխաղիր սուրբ Յակով
 փառօք աննըման ,
 Տուեալ Տանս Շարգումայ
 ընծայ յատկական ,
 Ուխտաւորաց բազմաց
 հանգիստ օթարան :
 Առ ոտքս Յակովայ
 գերահրաշ Ուխտին ,
 Գան յամեն ՚ի կողմանց
 և անդ ժողովին .
 Եւ առնեն բարեխօս
 ըղնա Արարչին ,
 Աղօթիւքն արժանի
 գուլ վերին դրախտին :

ԵՐԳԻ

Գովաստանութեան ՚ի վերայ հասն և հինգ խորանաց
որ ՚ի սուրբ Յակովի վանան :

Եախ և յառաջ զԱւագ խորան
Առնուլ ՚ի դէսլ է ինձ արժան ,
Որ է պայծառ և աննըման ,
Ունի ըզտիսլ արեգական :

Եւ ՚ի ներքոյ սորին պանծաց
Մարմին եղբօր Տեառն Յակովիքայ ,
Որ ՚ի հրեից սպանաւ նա ,
Ուր մինչեւ ցայժմ ամփոփեալ կայ :

Յերկուս կողմանս սուրբ Սեղանին
Երկու խորանք կան ՚ի կարգին ,
Մինն է սրբոյ Աստուածածնին ,
Խոկ միւսըն սուրբ Կարապետին :

Եւ ՚ի վերայ սոցին հիման
Երկու փոքրիկ կան այլ խորան ,
Սուրբ Պօղոսի և Պետրոսի
Առաքելոցըն սրբազն :

Յահեկակողմն սոյն Տաճարի
Գոյ սիրոյն մի Եկեղեցի ,
Յանուն սրբոյ Եջմիածնի ,
Ուր կայ սեղան սուրբ Մինայի :

Յէ ՚ի դըրան կողմըն դարձցիս
Եւ ՚ի սանդղոց ՚ի վեր ելցես .

Երկուս խորանս այլ եւս տեսցես ,
 Եւ ջերմ սիրով համբուրեսցես .
 Անըն ընթրեաց սուրբ Խորհրդին ,
 Այլափոխման է երկրորդին ,
 Նորոգ եղեւ շնուռածք սոցին
 Նախ քան ըգծեփ սուրբ Տաճարին :
 Ա երնատանէն ՚ի վայր իջեալ ,
 Յաւանդատունն գնացեալ ,
 Ստեփաննոս է սա կոչեալ ,
 Որ ՚ի սէր Տեառն նախ վրկայեալ .
 Արկին սեղան անդ ճոխ փայլի .
 Մինըն յանուն Լուսաւորչի .
 Եւ միւսըն սուրբ Ստեփաննոսի ,
 Որք սիրելիք են Քրիստոսի :
 Կայ անդ այլ և մեծ աւազան
 Հայրապետի Կիւրզի անուան ,
 Կենաց փայտին ՚ի յերեւման
 Երկու հազարք մըկըրտեցան :
 Եւ դու աստի գալ ՚ի կարգին ,
 Տես ըզսեղան սուրբ Գլւադրին ,
 Ուր ամփոփեալ է Գլուխ նորին ,
 Մեղ պարգեւեալ գանձ մեծագին :
 Եւ մերձ սորա երկաթ դուռ մի
 Ուր կայ ազնիւ պահարան մի .
 Եւ սուրբ Մինաս նա անուանի ,
 Ուր յարաժամ փակեալ սկահի :

Ուր ոսկեղէն արծաթեղէն
 Խաչ և կրամթեղք սնօթեղէն,
 Արքաց մատունիք բոլորն ամէն
 Մեծաւ խնամօք պահին անդէն։
 Դոն անդ և այլ երկու խորան
 Ազնիւ շքեղ և անկրման,
 Արքայն Սարգսիւ և Մինասայն
 Զօրավարաց մեծաց անուան։
 Աից սորտ է և դամբարան
 Մաքուր տապան սուրբ Մակարայն,
 Զի յաթոռ յայտ նոտու և այն,
 Աստ ամփոփեալ յետ իւր մահուան։
 Ե մերաց ոոցա սուրբ Խաչ շինեալ,
 Կան այլ երկու մատրունք կազմեալ,
 Աւաքելոց մինն անուանեալ,
 Սուրբ Համբարձման միւսըն կոչեալ։
 Դոն արտաքց սուրբ Տաճարի
 Եօթըն սեղան յոյժ պահծաղի,
 Երկուքն ՚ի մէջ գաւթին մեծի
 Սուրբ Նիկողէաց և Գէորգի։
 Չորսըն ՚ի մէջ սուրբ Ծորոսի,
 Որ է յատուկ Եկեղեցի,
 Շինեալ աղնիւ և գովելի
 Զեռամբ Հեթում թագաւորի։
 Եւ ՚ի տանիս այն տաճարի
 Գոյ և փոքրիկ այլ մատուռ մի,

Ո՞ր Հոդին սուրբ նաև անսուանի ,
 Անտի սուրբ Վեառըն տեսանի :
 Սոքա լիցին միշտ անխափան
 Մեղ օգնական և պահապան ,
 Ուրբ թուեցան յայս երդարան
 Քըսան և հինգ ահա խորան :

ԵՐԳ Ի Ա.

Դաշնեալ գովեստ ՚ի վերայ սրբոյն Յակովոյ :
 Ով սուրբ Յակովը ամենօրհնեալ ,
 Սիրով Հոգւոյն դու առլցցեալ ,
 Զի սուրբ անունու է հըռչակեալ
 Բոլոր յաշխարհը ասրածեալ :
 Անպեալ դիմեն վառեալ սիրով
 Ուխտաւորքըն անհուն ծովով ,
 Տեւ և գիշեր արտասուելով
 Ի յօդնութիւն զքեղ կոչելով :
 Օ եւ որք սիրով առ քեղ դիմեն
 Եւ արտասուօք զկուրծս բաղխեն ,
 Փութով առնուն զոր ինչ խընդրեն
 Արեամբ ներկեալ քո սուրբ Գյլսէն :
 Երդ աղաջեմ բարեխօս լեր ,
 Մի դադարիր առ Հայր և Տեր ,
 Արագապէս օգնական լեր
 Ուխտաւորացն ընծայարեր :

Ուխտաւոլքըն երբ դան ժաման ,
 Զվիշտս բոլոր անդ մոռանան ,
 Ի մէջ գաւթին ձեմեալ ցընծան ,
 Հոգւով հրճուեալ ուրախանան :
 Այսանի տամ փափաքողաց ,
 Ուխտաւորաց այն եկողաց ,
 Զսուրբ Տեղիս համբուրողաց ,
 Նոցին ըղչնորհս վայելողաց :

Ա՛վ Ճանապարհ բարի Յիսուս ,
 Դուռըն կենաց մըտից Քրիստոս ,
 Ուրք ՚ի ծովու են կենցաղս
 Ըզքեղ ունին միայնակ յոյս :
 Տէրունական Ուխտաւորաց
 Ի սուրբ Տեղիս քո դիմողաց ,
 Ախով քոյին ըզմայլողաց
 Ան ուղեկից յամեն դիմաց :
 Բ զհուր սիրոյդ յերկիր արկեր ,
 Գեղով սիրոյդ բորբոքեցեր .
 Ըզտեղիսրդ զօրս ընտրեցեր ,
 Սուրբ կարօտոյդ մեղ դեղ ցուցեր :
 Ուրբ Յակոբայ բաժակարբուն
 Եւ Յակոբայ եղբօր քոյին ,
 Աղաշանօք Գետրոս վիմին
 Ուխտաւորաց տուր հայցելին :

Դերեզմանի քո համբուրման ,
Գողգոթայի տեղւոյդ զենման ,
Սուրբ Աթոռոյ երկնանըման
Զամենեսեան արա արժան :

ԵՐԳ ԻԲ.

Դաշյեալ ՚ի վերայ արբոյն Յակովայ :

Աշխարհ եղբարք յականջ տռէք զիմ զբան ,
Սուրբ Յակոբայ տաճարըն է աննըման .
Սարսափելով մըտի ՚ի սուրբ Գերեզման ,
Կալով Շիրմին համբուրեցի ես ըզքարն :
Սուրբ Յարութի մեծ է և նր Յակոբ դար ,
Սողոմնի Տաճարն անտի դարու վար ,
Խնդն ՚ի տեղը արձր և բոլորն նորին սար ,
Արեք տեսէք ըզքրիստոսի նր եղբայրն :
Վիրայք և պարոնք դուք ում ըսպասէք ,
Եկայք զվայրն դքրիստոսին դուք տեսէք .
Միոյն Հազար տայ ձեզ՝ ընդէք անյոյս էք ,
Մեղքարեխօս լինի Աստուածամայրըն :
Դերեզմանն Աստուածածնի շատ լացի ,
Զազոս մըտաց զգաստութիւն անդ բացի .
Ի Հազարու Գերեզմանըն գլնացի ,
Անտի ելի ՚ի Համբարձման սուրբ լեռոն :
Սուրբ Համբարձման լերին մի կողմըն գեղէ ,
Մեղաւորաց փրկիչ ւախտից մեծ դեղէ .

Ելայք տեսէք որալէս չընաղ այն տեղէ
օի սուրբ Ասղիմ գեղեցիկ Ուխտատեղէ



Ե Բ Գ Ի Գ .

Ի վերայ վանուց սուրբ Հրեշտակապետ :

Դրսախտ արնեկախիտ
՚ի մեջ քաղաքին ,
Սուրբ Հրեշտակապետ
նախկին բանտ Փրոկչին .

Աստ ներկայացաւ
՚ի դառ Անապին ,
Ուր և կապեցաւ
՚ի ծառ ձիթենին :

Հրեշտակը ահարեկ
նորին ձաղանաց ,
Կային սատանեալ
շուք եգեալ փառաց .

Անդանօր մի ոմն
յըսպասաւորաց ,
Տայր նըմա ապտակ ,

լինէք ոխմագարձ :
Կուսանք սրբանուէք
կան ՚ի պաշտաման ,
Քաղաքացւոյ այս
Տաճար սրբազն :

Տեղի շրնորհաց ,
մեղաց քաւարան ,
Մի միայն պարծանկը
Ազգիս Աբամեան :

ԵՐԳ ԻԴ .

Ի ՀԵՐԱ ՀԱՆՈՒՅ ԱՆ-ՇԵ ՓԵԼՅԵ :

ԵՐԼՐՈՐԴ բանտ ՓԵՐԿԵՅԻՆ
մերձ սուրբ Սիովելի ,
Կանխաւ տուն աստ լեալ
կայիափային .

ԵՐԼՐՊԱՊԵԼԻ
վոշի սուրբ ԵՐԼՐԻՆ ,

Աւր թուք և ապտակ
տուան իմ ՓԵՐԿԵՅԻՆ :

Եղդ հարցեալ Պետրոս
Երիցս գայր յուրաստ ,
Հաւուն խօսելոյ
գայր անդրէն յիմաստ .

Յակնարկել ՓԵՐԿԵՅԻՆ
բան տայր նրմա աղդ ,

Յարեան արտասուաց
մըտանելը դարստ :

Կանդնեալ ՚ի տեղւոջ
Տաճար սրբազն ,

Կափարիչ սուրբ Ալեքս
 կազմեալ անդ Սեղան .
 Յերկըրպագութիւն
 անդ հանդիսանան ,
 Ազգաց և ազանց
 ժողով Տէրունեան :

Ե Բ Գ Ի Ե .

Դաշնեալ է Ալբայ առ-ը Փրիւալսանաց :

Ո՞ւս Դիք ինձ որ գովեմ զԱմենափրկիչ ,
 Կենդանեաց մեռելոց կեցուցիչ Փրկիչ ,
 Ախտաժետաց բըժիշկ , Դիւաց հալածիչ ,
 Յիմարաց տըգիտաց ուստցիչ Փրկիչ :
 Ի Քրիստոնի Շիքմէն յայն վայրըն բերին ,
 Ի ներքոյ խորանին զմեծ վէմըն եղին ,
 Չորս կողմն բաց թողին պատւական քարին
 Պէտպէս մեղաց չարեաց աղատիչ Փրկիչ :
 Վմենայն սուրբ Տեղին խորհրդական է ,
 Բոլորըն ամեն սուրբ աղօթարան է ,
 Կորաշէն սենեակիքն յոյժ պատուական է
 Դիւահարաց ախտից փաղատիչ Փրկիչ :
 Ո՞ւ կողմըն սուրբ Փրկիչն՝ մեռելոց թաղ է
 Միւս կողմըն որ Սիսն այլաղգեաց տեղ է
 Եւ այլքն ձիթենեաց պարտեղ ու պաղ է
 Յոյս մեղաւորաց է , և քաւիչ Փրկիչ :

ԵՐԳԻ Ի. Զ.

Ի Ձերայ սըմոյ ԲԵԼԵԿԵԴԵՄ :

Վասն իմ մանկացեալ
Փըրկչիդ բոլորից,
Սահմանք Եփրաթայ
ծագման քո ելից,
Ուր ծընար անախտ
օտար մեր կրրից,
Ի բազուկ Կուսին
գըգուեալ գըրկալից :
Քեր Աստուածորդւոյդ
մըսուր անքանից,
Տայ նինջ քընարեր
ի վերայ յարուից .
Եւ ջամբ խանդակաթ
կախն սուեանց Կուսից,
Անկարօտ ընութեան
արդ մեզ համակից :
Ուր հովիւք եղեն
փառաբանակից,
Երկնասպար զուարթնոց
իջեալ ի յերկնից .
Որոց գունդագունդ
էջք ի յեթերից ,

Մարդկան նըշանակ
 Եղեն վերելից =
 Փառք քեզ ՚ի բարձունս
 Հոգւով յնծալից
 Աստ մասուցանեմք
 անմահ արքայիդ .
 ԱՌ ՚ի Նազարէթ
 Գրլթթեալ ճաղկալից
 Աստ պըտղովք ՚ի լի
 բուրես հոտ վարդից
 Եւ քեզ ընծայեմք
 ընդ մօգուց երից
 Զերկըրապագութիւն
 Արարչիդ բնաւից .
 Առ ընկալ ՚ի մէնջ
 ընդ Կուսին անբիծ
 Զաղերս մաղթանաց
 տէրունեան Ուխտից :

ԵՐԳԻ ԻԵ .

Ե՞ս սրբամահուր պատան Ասպուածածնին :
 Վինօրհնեալ Մարիամ
 Մայր Տեսոն իմոյ տիրածին ,
 Հասարակաց նընջեաց քուն
 Ոլեառըն սուրբ Սիոնին :

Ուր Միածին բանն Աստուած

Հըրեշտակօք լուսարփին ,

Գայ իջանէ յաւանդումն

Հոգւոյն յերկրէ 'ի յերկրին :

Համագումար 'ի ծագաց

Սուրբ Առաքեալք 'ի տեղին ,

Համակին անդ սուրբ կրիւք

Մեծ տրտմութեան և խընդին :

Լուսապատար ջահազգեաց

Եւ սուրբ կուսանք ընդ նոսին ,

Բարձեալ զդագաղ Տիրամօր

Գէթսեմանեան տան շիրմին :

Օթեալ եղեւ անդանօր

Յերիս շրջան արեգին ,

Բարթողիմեայ յետագայ

Բանի տապանն տարփագին :

Տեսին ունայն ըզտեղին

Եւ գերեզման առանձին ,

Քաջ նմանեալ իւր Որդւոյն

Յարուցելոյ Միածնին :

Ի՞նդ ամպաճեմն սաւառնի ,

Ընդ օդ թեթեւ վերնային ,

Գունդք անմահից զուարթնոց

Յողջոյն խառնին սուրբ կուսին :

Կերակայից բարձրացեալ

Յեթերս 'ի վեր սէրարսիին ,

Բարեբանի օրհնութեամք
 Մաքուր Տաճար Անեղին :
 Աաղթեմք ՚ի ձօն օրհնութեան
 Գեղ Տերուհւոյդ մօր Բանին ,
 Հոյեաց ՚ի մեղ ՚ի բարձանց
 Յայս մեր ժողով սուրբ Ուխտին :
 Առք յերկրագալշ աստ սահիմք
 Համատագնասպք ՚ի վըշտին :
 Յերկնաշու քոյ սրողոտայն
 Մի ոտք մեր անդ գթեսցին :

ԵՐԳ Ի՛Ը

Ի վերայ վեհն արբոյ Համբարձման :
 Ի լրանալ տանեակլ քառից
 Աւուրց սրբայ Յարութեան ,
 Եւ Տէրն ՚ի լետորն ձիթենեաց
 Առաքելովք որբաղան :
 Ուր դառաջին և ըզմերջին
 Հրամանաց իւր տայր սպասուէր ,
 Թագաւորաց և աշխարհի
 Առներ զնոսատ քաջալեր :
 Ոիսվ հոգւով յուկիսածոյլ
 Յօդէ յանլոյծ ՚ի շղթայ .
 Ի Սաղիմեան նստեալ գադար
 Յերկնից զհոդին խոստանայ :

Եմպախաղաց վերասլանաց
 Ընդ օդ թեթեւ լուսազգեաց ,
 Արով դրանդիք երկնից բացան
 Վերելս մարդկան տալ յԱբտուած :

Ուր զուարթնոց իջեալ յերկնից
 Առաքելոց տան խրախոյս ,

Դոյն օրինակ իջանելոյն
 Կանխաւ լինին քաջայոյս :

Հաւատացեալք անդ խաչակրօն
 Լուսով փայլին վառ ՚ի վառ ,
 Մեղսասիրաց անհաւատից
 Նեցի դատիլ անաշառ :

Երդ խոնարհեալ յայս սուրբ լերին
 Աստուածորդւոյդ Համբարձման ,
 Մաղթեմք յերկնից զամենազօր
 Զհոգիդ սուրբ տալ մեզ օճան :

Յանկից վիրաց քոց հնգեցունց
 Մեզ կեանք ծաւալ ցոլասցին ,
 Յաւերժական լուսով փառաց
 Յաջեան քո կալ ՚ի դասին :

Ե Ր Գ Ի Թ .

Ի Քերայ Տնօրենութեան Քըիսպով :

Տերը սիրով խոնարհեցար ,
 Ֆարգանեղ կուսին բնակեցար ,

ԶԱՐՄԱՆԱԿԻՆ մարմին զդեցար ,
 Եւ աշխարհի լոյս ծագեցար .
 Ւ յանարատ կուսէն ծնար ,
 Ւ խանձարուրըս պատեցար ,
 Ւ յանիբանից մառը եղար ,
 Եւ 'ի մոդուցըն պատուեցար .
 Քառամօրեաց ընծայեցար
 Ըստ օրինաց դու 'ի Տաճար ,
 Փակեալ դրան բացող ցուցար ,
 Ւ ծերունեցին անդ գդուեցար .
 Ւ Յորդանան մլլրտեցար ,
 ՅԱՍՈՒԱՃ Հօրէդ վկայեցար .
 Ւ Յովիշաննէ քարոզեցար ,
 Գառն Աստուծոյ անուանեցար .
 Ւ ՎԵՐՆԱՍՈՒՆՆ բազմեալ եղեր ,
 Զահեղ խորհուրդն աւանդեցեր .
 Զաշակերտացդ զոսս ըռացեր ,
 Խոնարհութեան վարս ուստոցեր .
 Ւ Յուդայէ համբուրեցար ,
 Ւ ծառայէ ապօտակեցար ,
 Ւ չար Հրէից նախատեցար ,
 Կամաւ 'ի խաչ դու բարձրացար .
 Բնդ անօրէնս համարեցար ,
 Արբեր լեզի և դառնացար .
 Ուր կենդանիդ անշնչացար ,
 Սուր գեղարդեամբըն խոցեցար .

Ւ Յովսենիայ դու պատեցար,
 Ի գերեզման կոյս թաղեցար,
 Եւ մատանեաւ անդ կելքեցար,
 Ի զինուուորաց պահպանեցար:
 Ւ Դժոխս իջեալ աւերեցեր,
 ԶԱՐԴԱՄ զծնողն աբսուեցեր.
 Զարքայութեան դուռըն բացեր,
 Եւ մեղ ձրի պարզեւեցեր:
 Ւ Սուրբ Շիրմէն փառօք յարեար,
 Բազմաց յայտնի երեւեցար.
 Ընդ աշակեքոսկն բազմեցար,
 Յորժամ փակեալ դըրօք ցուցար:
 Ւ Գալիլեա ապա զնացեր,
 Անդ զԱռաքեալսն օրհնեցեր.
 Ի հեթանոս սուաքեցեր,
 Եւ քարողել պատուիրեցեր:
 ՅԵՐՄՈԱՂԵՄ կալ ասացեր,
 ԶԱՅՈՒԵԱԾ հոգին աւսմնդեցեր.
 Նովաւ լեզուս բաժանեցեր,
 Եւ չնորհօք զարդարեցեր:
 Ւ Զիթենեաց լերին դտոր,
 Յորմէ փառօք վեր համբարձար.
 Դասուց վերնոց ահեղ ցուցար,
 Եւ ընդ աջմէ չօր բազմեցար:
 ՎՀՈՒԵՐ Յիսուս ԱՅՈՒԵԱԾ և բան,
 Կրեցեր կամաւ դայս ամենայն.

Ընօրհիւ քո սուրբ Տնօրէնութեան,
Արժանացո քոյդ տէսութեան :

Ե Բ Գ Լ.

Ի Ալբայ սրբոյ Յարութեան Քընապոսի :

Գոհութիւն մեծ Տեառն Արարչին
Եւ Քրիստոսի Հանուրց Փրկչին ,
Որ 'ի ձեռըն իւրոյ Խաչին
Յարոյց ընդ իւր զմարդն առաջին :

Եյսօր յարեաւ 'ի մեռելոց .

Լոյս ծագեցաւ արարածոց .

Զհոգիս փրկեաց 'ի դժոխոց ,

Աւետիս տամ աղգիս շայոց :

|| ուսաւորեաց զոգիս մարդկան ,

Սուրբ յարութեամբըն պատուական .

Զմարմինն ետ մեղ անապական ,

Եւ սուրբ զարիւն իւր փրկական :

Ուրախութեամբ ճաշակեսցուք ,

Եւ սրբութեամբ հազորդեսցուք ,

Զի 'ի մեղաց սրբեալ լիցուք ,

Յանմահութիւն փոխարկեսցուք :

Իիւսեալ 'ի մի փառասրեսցուք ,

Լզյարուցեալըն գովեսցուք .

Զլոյս Գերեզմանն համբուրեսցուք ,

Եւ զյարութիւնըն պատուեսցուք :

Առարք քաղաքըն Երուսաղեմ,
 Ընդ որ և սուրբըն Քեթըհէմ,
 Ուրբ հաւատոյս մար Եղին վէմ,
 Մարտիոց ամառ դիւաց ընդդէմ =
 Տիրամօր սուրբ Վասուածածնին
 Աւրախութիւն եւս իւր Որդին,
 Եւ որք այսօր սպաւորին,
 Սադայելի դասուն կարգին =

ԵՐԳ ՀԱ.

Ի վերայ սրբոյ Կարապետին =

Խանանցածին չէ յարուցեալ
 Մեծ քան ըզքեղ այր զօրացեալ,
 Ի Տեառնէ է այս ծանացեալ,
 Խնդրակատար սուրբ Կարապետ,
 Դոյլ Կայս առ մայր քո յղացեալ,
 Դու յարդանդին զայն իմացեալ
 Երկիր սպադեր անդ խաղացեալ,
 Քանին տատար սուրբ Կարապետ =
 Օսքարիա հայրդ համբացեալ,
 Ի քում ծննդեան բերան բացեալ,
 Զանունդ Յովհաննէս կարդացեալ,
 Շնորհապատար սուրբ Կարապետ =
 Բնդ մէջ կամբեալ մաշկեայ գօտի
 Քնոմիեցար յանապատի,

Եւ հրեշտակաց դու հաւասար
 Վմանեցաք սուրբ Կարապետ ։
 Դու արուսեակ ծագման Արփեսից,
 Ընդունարան շնորհաց Հոգւոյն,
 Որ մկրտիչ Առուեածորդւոյն
 Ընտրեալ դժոար սուրբ Կարապետ ։
 Չեռամբդ առեալ ըզջուը դետոյն
 Լցեր վերոյ օրհնեալ Գլխոյն,
 Եւ ձայնի Հօր վկացելոյն
 Արժանացար սուրբ Կարապետ ։
 Զայն բարբառոյ մականուանեալ,
 Ճշմարտութեան միշտ հաւանեալ,
 Ըզշերովդէս յանդիմանեալ,
 Գլխատեցաք սուրբ Կարապետ,
 Ի դժոխալն քարոզեցեր,
 Տեառն ըզդալուստ առետեցեր,
 Արով զտրտմեալս բերկրեցուցեր,
 Ուրախարար սուրբ Կարապետ ։
 Դովելի ես դու զանազան,
 Կենաց մերոց ես գաւաղան,
 Գրիստոնէից լեր աւաղան,
 Ա՛վ սրբարար սուրբ Կարապետ ։
 Առաքելոց, Մարդարէից,
 Մարտիրոսաց, քահանայից,
 Ճգնաւորաց սրբոց հանրից
 Մեծ կոչեցար սուրբ Կարապետ ։

Քո աղօթքն է ընդունական ,
Բարեխօեա վասրն մարդկան ,
Որ անուանիս Մշու Սուլդան ,
Հոգեպարար սուրբ Կարապետ :

ԵՐԳ ԼԲ.

Դուշանելին ՚ի վերայ բարեկամին քերակոսի
որբոյն Առաջարու :

Խակզեանէ Բանն Աստուծոյ
Եղեւ մարմին՝ առ փրկելոյ
Ըզհողածին բնութիւն մարդոյ ,
Եւ ՚ի մեղաց ազատելոյ :

Դամբար լուսոյ արդարութեան ,
Ղաղար քարող Ճշմարտութեան ,
Որ ցուցար մեզ դուռն յարութեան ,
Եւ ճանապարհ արքայութեան :

Երի Ղաղար իմ սիրական ,
Ե՛կ մի մնար ՚ի գերեզման .
Տէրըն կոչեաց և զքեզ հան
Ի դժոխոցն անդնդական :

Օուարթնոց նման աղնիւ Ղաղար ,
Սուրբ և անմեղ մաքուր արդար
Ըզձայնն լւար ըզկենարար ,
Չորեքօրեայ մեռեալդ յարեար :



Արարչասէր բարբ գովիւլի ,
 Լուստճաճանչ և հրաշալի ,
 Անուանակիցդ իմ սիրելի ,
 Ղազար ամբիծ զարմանալի :
 Քստեալ խղճուկս հոգւով տկար ,
 Զքեզ ազաւեմ միշտ անդադար ,
 Զյետնեալ ծառայդ մի մուանար ,
 Ալ սրբազն տէր իմ Ղազար :

Ե ՐԳ ԼԳ .

Գովաստանութեան Դ վերայ սրբոյ Հօրն Աւրոյ
 Դրէժրէ Լուստճովն :

ՅԱՆԱԼ անուն հօրէ ծնեալ ,
 Իբր ՚ի փշոյ մեզ վարդ բուսեալ .
 Ըզթաղէի շնորհն առեալ ,
 Սուրբ Գրիգոր հայր մեր ընտրեալ :
 Դառնադոյն վասն Ազդիս տանջեալ ,
 Չարչարանօք նահատակեալ ,
 Վեր դառնաշունչ օձից ընակեալ ,
 Լուստուորիչդ Ազդիս գովիւլեալ :
 Շոտրւածորդւոյն յերկիր իջեալ ,
 Ահեղ անուամբ իւրով կոչեալ ,
 Երկինանման Աթոռ կաղմեալ ,
 Լուստուորիչդ եղեր բազմեալ :

Տանըս Հայոց հովիւ կացեր,
 Այս գիտութեամբ կատարեցեր,
 Հօր Աստուծոյ ընծայեցեր,
 Կուսաւորիչդ գերազանցեր:
 Առ Առաքեալ չորեքտասան
 Եւ Մովսէսի համանման,
 Կանսն վարուց ճշմարտաբան,
 Կուսաւորիչդ մեր սրբազան:
